



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

□ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ □ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

ք. Երևան

11.01.2021թ.

□ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ □ հիմնադրամի (ինստիտուտ) Հոգաբարձուների խորհրդի նիստն անցկացվեց առկա եղանակով Ինստիտուտի գոհական խորհրդի նիստերի դահլիճում (ք. Երևան, Ալեք Մանուկյան 11, 2-րդ մասնաշենք, 3-րդ հարկ): Նիստին ներկա էին հոգաբարձուների խորհրդի (խորհուրդ) 24 անդամներից 23-ը:

Գրանցման թերթիկը կցվում է:

Ապահովված էր նիստի քվորումը:

Խորհրդի նախագահը 2021 թվականի հունվարի 11-ին խորհրդի անդամներին էլեկտրոնային փոստով գրավոր տեղեկացրել է, որ հիվանդության պատճառով գտնվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում և ֆիզիկապես չի կարող ներկա գտնվել ռեկտորի թափուր պաշտոնի ընտրության առկա նիստին: Միաժամանակ առաջարկել է խորհրդի նիստի վարման համար քննարկել խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանի թեկնածությունը:

Խորհրդի նիստին ներկա 23 անդամները միաձայն հաստատեցին Գոհար Մամիկոնյանի թեկնածությունը՝ որպես նիստը նախագահող:

Ռեկտորի ընտրության նիստը վարեց Գոհար Մամիկոնյանը:

Նիստն արձանագրեց՝

Խորհրդի քարտուղար Անահիտ Ստեփանյանը:

Օրակարգ

1. 11.01.2021թ. Հոգաբարձուների խորհրդի թիվ 1 նիստի օրակարգի հաստատում:
2. Հավակնորդների «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում:
3. Թեկնածուների ծրագրերի ներկայացում:
4. Հավակնորդներին հարցերի ներկայացում և խորհրդի անդամների ելույթներ:
5. Հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:
6. Ռեկտոր ընտրելու նպատակով գաղտնի քվեարկություն:
7. Ռեկտորի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

Հոգաբարձուների խորհրդի նիստի (այսուհետ՝ նիստ) նախագահող Գոհար Մամիկոնյանը ներկայացրեց, որ համաձայն Ինստիտուտի ղեկավարի ընտրության կանոնակարգի, նախատեսված է ղեկավարի ընտրության դնկիակ նիստ:

Սակայն, որպեսզի ապահովվի լրագրողների ներկայությունը նիստին և նիստի որոշ հատվածների՝ լուսա և տեսանկարահանելու իրականացնելու համար, նիստի նախագահողը առաջարկեց նիստի դռնբաց անցկացումը դնել խորհրդի նիստի քվերակությանը: Խորհրդի անդամ Է. Ալեքսանյանը նշեց, որ կառավարության որոշումն ունի ավելի բարձր իրավաբանական ուժ: Խորհուրդը քվերակեց ղեկավարի ընտրության նիստը դռնբաց անցկացնելու համար: Հարցին կողմ քվերակեց նիստին ներկա 23 անդամներից 22-ը, մեկ անդամ Է. Ալեքսանյանը քվերակեց ձեռնպահ:

Օրակարգի առաջին հարցով (զեկուցող՝ խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյան)

Նիստը նախագահողը առաջարկեց հաստատել 11.01.2021թ. նիստի օրակարգը: Օրակարգը հաստատվեց նիստի ներկա բոլոր անդամների կողմից՝ 23 կողմ, 0՝ դն:

Նիստի օրակարգը հաստատվեց:

Օրակարգի երկրորդ հարցով (զեկուցող՝ խորհրդի քարտուղար Անահիտ Ստեփանյան)

Նիստի քարտուղարը ներկայացրեց, որ ղեկավարի ընտրության նիստին ներկայացել են երկու հավակնորդ՝ Դավիթ Սենիկի Խիթարյանը, մ. գ. թ. , պրոֆեսոր, Ինստիտուտի ղեկավարի ժ/պ, գործերը հանձնել է 2020թ. դեկտեմբերի 18-ին և համապատասխանում է ղեկավարի ընտրության կանոնակարգի պահանջներին, առաջադրվել է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից, երկրորդ հավակնորդը Գագիկ Սարգսյան Գառնիկի, մ. գ. թ. , պրոֆեսոր, Ինստիտուտի ուսումնագիտական գծով պրոֆեսոր, ինքնաառաջադրվել է, գործերը հանձնել է 2020թ. դեկտեմբերի 24-ին, համապատասխանում է ղեկավարի ընտրության կանոնակարգի պահանջներին: Ա. Ստեփանյանը նշեց, որ Ինստիտուտի ղեկավարի թափուր հաստիքի պաշտոնի համար դիմել է 3-րդ հավակնորդը՝ Արմեն Լևոնի Գրիգորյանը, մ. գ. դ. դոցենտ, Հայ-ռուսական սլավոնական համալսարանի ֆիզիկական կուլտուրայի, դաստիարակության և առողջ ապրելակերպի ամբիոնի պրոֆեսոր, ով 2021թ. հունվարի 11-ի առավոտյան ներկայացրել է ինքնաբացարկի դիմում:

Օրակարգի երրորդ հարցով (զեկուցող՝ խորհրդի նիստի նախագահող Գոհար Մամիկոնյան)

Գ. Մամիկոնյանը անրադառնալով թեկնածուների ծրագրերի ներկայացման հարցին, ցանկություն հայտնեց և առաջարկեց խորհրդի անդամներին, որ թեկնածուները ներկայացնեն անմիջականորեն իրենց ծրագրերը, քանի որ օրակարգում ներկայացված է, որ ղեկուցողը խորհրդի նախագահն է: Գ. Մամիկոնյանը առաջարկեց, որ թեկնածուների ծրագրային ելույթներով հանդես գան և հարցեր դնել խորհրդի քվերակությանը: Առաջարկությանը կողմ քվերակեց նիստին ներկա 23 անդամներից 23-ը: Առաջարկությունն ընդունվեց:

Նիստը նախագահողը ներկայացրեց նաև կանոնակարգով սահմանված կանոնները, ըստ որոնց թեկնածուները ծրագրային ելույթի համար ունեն 10 րոպե ժամանակ: Ըստ այբբենական հերթականության ելույթի իրավունք տրվեց ռեկտորի թեկնածուներին:

Նիստի նախագահող Գ. Մամիկոնյանը ներկայացրեց թեկնածուների վերաբերյալ տեղեկություններ՝ ըստ իրենց ինքնակենսագրականների: Ինքնակենսագրականները ներկայացված են ռեկտորի թեկնածուների անձնական գործերում:

Գ. Մամիկոնյանը ևս մեկ անգամ հիշեցրեց, որ ռեկտորի թեկնածուներն ունեն ծրագրային ելույթի համար 10 րոպե ժամանակ, ինչպես նաև տեղեկացրեց, որ թեկնածուներին տրվող հարց ու պատասխանի ժամանակը ևս 10 րոպե է:

Ելույթի համար խոսքը տրվեց Դավիթ Սենիկի Խիթարյանին:

Դ. Խիթարյանը նշեց, որ իր ծրագիրը վերաբերում է Ինստիտուտում համակարգային փոփոխություններին, որոնք առաջիկա 5 տարվա ընթացքում պետք է իրականացվեն, որոնց հետ համադրվում են նաև Դ. Խիթարյանի պաշտոնավարման 16 ամիսների գործունեության թույլ և ուժեղ կողմերը: Դ. Խիթարյանը ներկայացրեց ամբողջական ծրագիրը, որը պահվում է ռեկտորի անհատական գործերում և սույն արձանագրության անբաժանելի մասն է համարվում:

Դ. Խիթարյանի բարեփոխումների և զարգացման հայեցակարգի բարեփոխումների հիմնական ուղղություններն են՝

1. Կառավարման բարեփոխումներ,
2. Կրթական ծրագրերի բարեփոխումներ,
3. Գիտահետազոտական գործունեության բարեփոխումներ,
4. Ուսանողական կյանքի բարեփոխումներ,
5. Միջազգայնացման ուղղված բարեփոխումներ,
6. Բարենպաստ միջավարի ապահովում,
7. Ֆինանսական ռեսուրսներ:

Ելույթի համար խոսքը տրվեց Գագիկ Գառնիկի Սարգսյանին:

Գ. Սարգսյանը ներկայացրեց, որ ունի բավականին երկար տարիների փորձ, որոնց ժամանակ շարժվել է որոշակի սկզբունքներով՝ թիմային աշխատանք, հաշվետվողականության, թափանցիկություն, հրապարակայնություն, հանրային պատասխանատվություն, ուսանողակենտրոն կրթություն, հավատարմություն ավանդույթներին և արժեքներին, ռազմավարական պլանավորում, որոնցով կշարժվի նաև ռեկտոր ընտրվելուց հետո:

Այս սկզբունքները կազմում են Գ. Սարգսյանի ծրագրի առանցքը, որով առաջ է գնալու բուհը:

Գ. Սարգսյանը ներկայացրեց ամբողջական ծրագիրը, որը պահվում է ռեկտորի անհատական գործերում և սույն արձանագրության անբաժանելի մասն է համարվում:

Ռազմավարական ծրագրի նպատակները՝

1. Կառավարում և վարչարարություն,
2. Կրթական գործունեություն,
3. Ենթակառուցվածքներ, ֆինանսական ռեսուրսներ,
4. Ուսանողակենտրոն քաղաքականություն,
5. Արտաքին և հանրային կապեր,
6. Արդիական հետազոտություններ և նորարարություն,
7. Որակի ներքին ապահովման համակարգ:

Օրակարգի չորրորդ հարցով (զեկուցող՝ Խորհրդի նիստի նախագահող Գոհար Մամիկոնյան)

Նիստի նախագահողը օրակարգի չորրորդ հարցով առաջարկեց ըստ կանոնակարգի հարցեր ուղղել ռեկտորի հավակնորդներին:

Հարցառում՝ Խորհրդի անդամ Նաիրի Սարգսյան

Հարց 1.

Արտակարգ իրավիճակներում ռիսկերի կառավարման համակարգը ի՞նչպես է աշխատելու ձեր ընտրվելու դեպքում:

Պատասխանող՝ Գագիկ Սարգսյան

Գագիկ Սարգսյանը նշեց, որ ռիսկերի կառավարումը վերաբերում է ֆինանսական ռիսկերի կառավարմանը, որ խնայողությունների, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսներ ներգրավելու միջոցով կարելի է հաղթահարել ռիսկերը:

Նշեց, որ հստակ հաշվարկներ են պետք ոչ թե մեկ տարվա համար, այլ լուրջ ֆինանսական պլանավորում է պետք առաջիկա 3, 4 տարվա համար: Միաժամանակ նշեց, որ չի տիրապետում Ինստիտուտի 2021թ. բյուջեյի նախահաշվին:

Հարց 2.

Որպես պրոռեկտոր փորձե՞լ եք դիմել դրամաշնորհային ծրագրերի համար կամ առաջիկայում, որ չընտրվեք որպես ռեկտոր, կդիմեք ծրագրերի համար:

Պատասխանող՝ Գագիկ Սարգսյան

Գ. Սարգսյանը նշեց, որ անապայմանորեն չընտրվելուց հետո էլ դիմելու է ծրագրերի, քանի որ իր մայր բուհն է։ Միջ այդ չի դիմել, քանի որ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր է և նշեց, որ բուհը ունի միջազգային ծրագրերի գծով պրոռեկտոր, ով ողջ միջազգային դրամաշնորհային ծրագրերի պատասխանատուն է, միևնույն ժամանակ հավելեց, որ որոշակի մասնակցություն ունեցել է։

Հարցատու՝ Վարդան Սմբատյան

Աշխատանքային գործունեության ընթացքում ի՞նչ նախադրյալներ եք ստեղծել, որպեսզի իրականացնեք ձեր հայեցակարգի տեսլականի դրույթները, փորձե՞լ եք և ի՞նչ խնդիրների եք հանդիպել։

Պատասխանող՝ Գագիկ Սարգսյան

Գ. Սարգսյանը հայտարարեց, որ տեսլականը գրել է որպես ռեկտորի թեկնածու։ Այնուամենայնիվ նշեց, որ հասարակագիտության ամբիոնը մինչ իր ամբիոն դառնալը, և դառնալուց հետո նշեց արդեն տեսել են ինչպես է աշխատել, ինչպես նաև իրեն տեսել են որպես դեկան և կատարված աշխատանքը, որպես պրոռեկտոր կարծում է ևս, որ իր աշխատանքից դժգոհ չեն։

Հարցատու՝ Լիլիթ Հակոբյան

Կարող եք մանրամասնել հանրային կապերի տիրույթում Ձեր տեսլականը. մասնավորապես կորպորատիվ մշակույթի ձևավորման և սոցիալական պատասխանատվության մասով։

Պատասխանող՝ Գագիկ Սարգսյան

Գ. Սարգսյանը նշեց, որ բուհը հանրային է և բուհը պետք է ունենա բարձր հանրային և սոցիալական պատասխանատվություն, հավելելով նաև, որ բուհն ունի դրա համար լավ հիմք։

Հարցատու՝ Գ. Մամիկոնյան

Ձեր հայեցակարգում նշված կառուցվածքի փոփոխությունները ինչպես են լինելու, որպեսզի այն բուհի համար ցնցումներ չառաջացնի և լինի ռիսկերից ապահովագրված, ինչպես նաև ունե՞ք աշխարհի բուհերից ուսանողների լայն համագործակցության և ինքնավարության ապահովման օրինակներ։

Պատասխանող՝ Գագիկ Սարգսյան

Գ. Սարգսյանը նշեց, որ ուսանողների ինքնավարությունն ունի լայն եզր օրենքով սահմանված բոլոր պահանջները պահպանելով, որը ենթադրում է ուսանողների ներգրավումը, իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկումը, որը պետք է արվի կառավարման բոլոր մակարդակներում։ Բուհի ողնաշարը ուսմանագիտական բաժին է, ըստ իր բուհը պետք է դառնա

սպորտային գիտության առաջատարը: Իսկ ուսումնագիտական բաժնում մեթոդաբանություն չիրականացնելը դա ուղղակի անթույլատրելի է:

Հարցատու՝ Արսեն Հակոբյան

Ո՞նց եք պատկերացնում միջազգայնացման զարգացումը:

Պատասխանող՝ Գագիկ Սարգսյան

Գ. Սարգսյանը նշեց, որ բուհում խնդիրը ցավալի է միջազգային ուսանողների ներգրավման մասով և շարունակում է մնալ այդպիսին: Չարգացումը տեսնում է եվրոպական կրթական ծրագրերին մասնակցությունը, մյուսը համագործակցությունը ԱՄՆ–ի Թենեսիի համալսարանի հետ:

Հարցատու՝ Արսեն Հակոբյան

Ո՞նց եք պատկերացնում միջազգայնացման զարգացումը:

Պատասխանող՝ Դավիթ Խիթարյան

Միջազգային հարաբերությունների մակարդակը բավարար չէ, այնուամենայնիվ կան որոշ ձեռքերումներ, բուհն ունի մեկ արտասահմանցի ուսանող, որի հետ կրթությունը իրականացվում է անգլերեն լեզվով կրթական ծրագրով, ինչպես նաև նախապատրաստական դասերում սովորում են 17 արտասահմանցի ուսանող: 2020թ. տարում եղել են պայմանավորվածություններ Հնդկաստանի հետ ուսանողների փոխանակման, սակայն համավարակի պատճառով չի իրականացվել: Միջազգայնացման զարգացման համար անգլերեն լեզվի ուսուցման վրա է մեծ ուշադրություն դրաձվում:

Հարցատու՝ Նաիրի Սարգսյան

Ի՞նչ եք պլանավորում մասնավոր հատվածի հետ բուհի համագործակցության շարունակության և խորացման համար:

Պատասխանող՝ Դավիթ Խիթարյան

Դ. Խիթարյանը նշեց, որ մասնավոր հատված հիմնականում նկատի ունի գործատուները՝ ֆեդերացիաներ, ֆիտնես ակումբներ, որոնց հետ անցնող տարում կնքվել են համագործակցության հուշագրեր: Հուշագրերի կնքմամբ հիմք է դրվելու ապահովել բուհի նյութատեխնիկական բազան այն առումով, որ բուհի ուսանողները գործնական դասերը կարող են անցկացնել ֆեդերացիաների կամ ակումբների բազաներում:

Հարցատու՝ Գոհար Մախկոնյան

Բուհի համար ի՞նչպիսի մարտահրավերներ են եղել, արդյո՞ք հաղթահարվել է, ի՞նչպես, եթե՝ ոչ, ի՞նչպես եք պատրաստվում հաղթահարել:

Պատասխանող՝ Դավիթ Խիթարյան

Դ. Խիթարյանը նշեց, որ մարտահրավերը եղել է համավարակը, որին բուհը պատրաստ չի եղել: Հեռավար եղանակով դասերի անցկացումը, պրոֆեսորադասախոսական մեծ մասի նորագույն տեխնոլոգիաներին չտիրապետելը, համակարգչային տեխնիկայի բացակայությունը: Սակայն կարճ ժամանակով բուհը հաղթահարել է այդ մարտահրավերը՝ ապահովելով ամեն անհրաժեշտով: Մյուս ամենամեծ մարտահրավերը պատերազմն էր և ուսանող զինվորների կորուստը: Իսկ լրջագույն մարտահրավերը դեռ առջևում է այն առումով, որ դեռևս բուհը պետք է մշակի ուսման վարձերի վճարման և զեղչման ճկուն համակարգ, որպեսզի կարողանա օգնել պատերազմին մասնակից զինվոր ուսանողներին:

Խորհրդի անդամ Է. Ալեքսանյանն առաջարկեց ընտրված թեկնածուն ներկայացնի Խորհրդին առաջիկա մեկ տարվա ծրագիրը, որպեսզի հստակ գնահատական տրվի ընտրված ռեկտորի աշխատանքին:

Դ. Խիթարյանը նշեց, որ բուհը մշակում է 5 տարվա ռազմավարական ծրագիրը, որտեղ ըստ տարիների կան գործողությունների պլան ժամանակացույցը:

Հարց ու պատասխանից հետո նիստի նախագահողը տեղեկացրեց, որ անցնում են Խորհրդի անդամների ելույթների փուլին:

Ելույթներ ունեցան Խորհրդի անդամներ Ելենա Հակոբյանը, Գոհար Մամիկոնյանը, Վարդան Սմբատյանը, Դիանա Ալեքսանյանը:

Օրակարգի հինգերորդ հարցով (զեկուցող՝ Խորհրդի նիստի նախագահող Գոհար Մամիկոնյան)

Գ. Մամիկոնյանը ներկայացրեց, որ համաձայն ռեկտորի ընտրության կանոնակարգի Խորհրդի անդամներից պետք է ձևավորվի հաշվիչ հանձնաժողով՝ 5 հոգուց բաղկացած: Խորհրդի անդամ Վ. Սմբատյանը առաջարկեց Գ. Մամիկոնյանի թեկնածությունը, իսկ Գ. Մամիկոնյանը առաջարկեց Ա. Թամոյանի, Դ. Ալեքսանյանի և Ա. Թադևոսյանի թեկնածությունները, դասախոսական կազմից առաջարկվեց Վարդան Սմբատյանի թեկնածությունը, արդյունքում ձևավորվեց հաշվիչ հանձնաժողովը՝ հետևյալ կազմով

1. Գ. Մամիկոնյան
2. Դ. Ալեքսանյան
3. Ա. Թադևոսյան
4. Ա. Թամոյան

5. Վ. Սմբատյան

Հաշվիչ հանձնաժողովի կազմը դրվեց քվերակության: Քվերակությանը մասնակցեցին խորհրդի անդամների հանձնաժողովի անդամ չհանդիսացող անդամները: Քվերակությունը անցավ միաձայն՝ 18 կողմ:

Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրեց Գ. Մամիկոնյանին՝ որպես նախագահ, իսկ Դ. Ալեքսանյանյանին՝ որպես քարտուղար:

Օրակարգի վեցերորդ հարցով (զեկուցող՝ Խորհրդի նիստի նախագահող Գոհար Մամիկոնյան)

Փակ գաղտնի քվերակությամբ կազմակերպվեց և անցկացվեց Ինստիտուտի ռեկտորի ընտրությունները:

Օրակարգի յոթերորդ հարցով (զեկուցող՝ Խորհրդի նիստի նախագահող Գոհար Մամիկոնյան)

Գ. Մամիկոնյանը հայտարարեց քվերակության արդյունքները՝ Դավիթ Սենիկի Խիթարյան, 15 կողմ, Գագիկ Գառնիկի Սարգսյան՝ 8 կողմ: Բոլորին դեմ 0, անվավեր 0, խոտանված քվեաթերթիկ 5:

Փակ, գաղտնի քվերակության արդյունքները դրվեց Խորհրդի հաստատմանը: Կողմ քվեարկեց 23 անդամներից 23-ը: Այսպիսով Ինստիտուտի ռեկտոր ընտրվեց Դավիթ Սենիկի Խիթարյանը:

Խորհրդի նիստը նախագահող

Գոհար Մամիկոնյան

Խորհրդի քարտուղար

Անահիտ Ստեփանյան